THE PECILARITIES OF THE INDEPENDENCE OF THE PRIMARY SCHOOL CHILDREN IN THE CONDITIONS OF DISTANCE EDUCATION

Hakobyan S., Khanamiryan I. (Yerevan State University, Yerevan, Armenia)

sonahakobyan97@mail.ru, irina.khanamiryan@gmail.com

Ներկայացման ամս. 31.07.2021
Գրախոսման ամս. 27.08.2021
Տպագրության ընդունման ամս. 17.12.2021

This article reflects the concepts of teachers and parents about the independence of primary schoolchildren in the context of the 2020 pandemic. A comparative analysis is given between the characteristics and types of independence (activity, criticality and flexibility of thinking, independent homework, dependence on parents when performing various tasks, etc.) in the conditions of distance and full-time education. Independence is especially important at primary school age, when educational activity becomes dominant. The study is aimed at studying the characteristics of the independence of primary schoolchildren, for whom the transition to distance learning has become especially critical, given their age characteristics. According to the hypothesis, it is assumed that, in contrast to full-time education, distance learning contributes to the development of the independence of primary school children. An expert survey was conducted using 2 questionnaires. The research results are presented in the form of corresponding conclusions. In general, it can be stated that distance learning negatively affects the activity, self-confidence and independence of primary school children.

Keywords: *independence, activity, educational process, distance learning.*

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2022.5.1.040

«Ինքնուրույնությունը» սովորաբար սահմանվում է որպես անձի կամային որակ, որն ընդգրկում է ինքնուրույն իր առջև նպատակներ դնելու, առանց արտաքին օգնության դրանց հասնելու, ուղիներ գտնելու և որոշումներ կայացնելու կարողությունը [4]: Կարևոր բնութագիր է համարվում պատասխանատվությունը, որն ուղեկցվում է նոր պայմաններում գործելու, ոչ ստանդարտ որոշում կայացնելու պատրաստակամությամբ և կարողությամբ [5]: Ինքնուրույնությունը բնավորության գիծ է, որը մարդուն հնարավորություն է տալիս կառուցելու սեփական վարքագիծը, հարաբերականորեն անկախ խմբային ճնշումներից, ընդունված կոգնիտիվ, գնահատողական և մշակութային կարծրատիպերից: Ինքնուրույնության առավել կարևոր բաղադրիչ է

համարվում կոգնիտիվ ինքնուրույնությունը, որը դրսևորվում է ուսումնական գործընթացում: Այն իրենից ենթադրում է քննադատական և ճկուն մտածողություն, որոնց հիմքում գտնվում է մարդու պրոֆեսիոնալ և մենթալ կարողությունները [3]:

Ինքնուրույնությունը կարևոր տեղ է զբաղեցնում կրտսեր դպրոցական տարիքում, երբ առաջատար գործունեություն է դառնում ուսումը: Կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունն ինտենսիվ կերպով ձևավորվում է ուսումնական գործունեության ընթացքում: Արդեն երրորդ դասարանում կրտսեր դպրոցականները կարող են վերահսկել ոչ միայն իրենց գործողությունները, այլ նաև համադասարանցիների գործողությունները, կարող են կատարել տնային առաջադրանքները ինքնուրույն: Չորրորդ դասարանում նրանք արդեն ունակ են իրենց առջև դնել ուսումնական խնդիրներ, կազմել աշխատանքային ռեժիմ, գնահատել և ստուգել իրենց կատարած աշխատանքը:

Կրտսեր դպրոցականի ինքնուրույնության զարգացման ամենակարևոր ցուցանիշներից են համարվում նպատակադրումը, ուսուցման ներքին դրդապատճառվածությունը, ինքնակառավարումը, պլանավորելու կարողությունը, ինքնագնահատականը, ճանաչողական գործընթացների կամածինությունը: Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի մոտ զարգանում և ձևավորվում է այնպիսի հոգեֆիզիոլոգիական և սոցիալական նորագոյացություններ, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետորեն զարգացնել ուսման մեջ ինքնուրույնությունը և ձևավորել ինքնուրույն ուսումնական գործունեության հիմքերը: Ամենակարևոր դրսևորումներից է դառնում սեփական տեսակետի արտահայտելու կարողությունը, իր և դիմացինի արտահայտած մտքերին քննադատական մոտեցումը [6]: Համաձայն ՀՀ հանրակրթական պետական չափորոշիչների, կրտսեր դպրոցական տարիքի երեխան պետք է ունենա ինքնուրույն սովորելու կարողություններ՝ ինքնակազմակերպվել և ինքնուրույն գործունեություն ծավալել, ճիշտ գնահատել իր հնարավորությունները, ունենալ սովորելու կամք և վստահություն սեփական ուժերի հանդեպ [1]: 2020 թվականի առցանց ուսուցման մարտահրավերը մեծապես ազդեցին հատկապես կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության վրա: Այն նոր պահանջներ դրեց ինչպես կրթօջախների, այնպես էլ սովորողների առջև:

Սույն աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել կրտսեր դպրոցականների ինքնուրույնության դրսևորումները հեռավար ուսուցման պայմաններում:

Հետազոտության խնդիրներն են՝

- ✓ Դուրս բերել այն ոլորտները, որտեղ դրսևորվում է կրտսեր դպրոցականների ինքնուրույնությունը՝ հեռավար կրթության պայմաններում.
- ✓ Առանձնացնել ինքնուրույնության առանձնահատկությունները հեռավար և առկա ուսուցման պայմաններում.

✓ Համեմատել կրտսեր դպրոցականների ինքնուրույնության առանձնահատկությունները ծնողի և ուսուցչի տեսանկյունից.

Մեր հետազոտության վարկածն է՝ ենթադրվում է, որ ի տարբերություն առկա ուսուցմանը, հեռավար ուսուցումը նպաստում է կրտսեր դպրոցականի ինքնուրույնության զարգացմանը:

Հետազոտության ընտրանքը կազմված է 3-4-րդ դասարաններում սովորող աշակերտների ծնողներից (35 հետազոտվող) և այդ նույն դասարաններում դասավանդող 20 ուսուցիչներից:

Հետազոտության իրականացման համար իրականացվել է փորձագիտական հարցում, կիրառել ենք մեր կողմից կազմված հարցարանները, որոնք ուղղված են եղել դուրս բերելու առկա և հեռավար կրթության պայմաններում ինքնուրույնության ցուցանիշները: Առաջին հարցարանը ուղղված է դպրոցականների ինքնուրույնության դրսևորումների ոլորտների մասին ծնողների պատկերացումների դուրս բերմանը: Երկրորդ հարցարանը ուղղված է կրտսեր դպրոցականների ինքնուրույնության վերաբերյալ ուսուցիչների պատկերացումների դուրս բերմանը: Հարցարանները կազմված են մի քանի բլոկերից, որոնք բացահայտում են կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունը ճանաչողական, կազմակերպչական ոլորտներում, հնարավորություն են տալիս դուրս բերելու նաև կրտսեր դպրոցականների ակտիվությունը, նրանց ինքնուրույն գործելը, ծնողներից կախվածությունը և այլն:

Համաձայն ծնողական հարցաթերթերից ստացված արդյունքների (տես աղյուսակ 1), կարող ենք նկատել, որ, համեմատած առկա ուսուցման, հեռավար ուսուցման պայմաններում ինքնուրույնության դրսևորման ցուցանիշները բավականին ցածր են:

Աղյուսակ 1.

Ինքնուրույնության դրսևորման ցուցանիշները առկա և հեռավար ուսուցման պայմաններում ծնողների տեսանկյունից

	Առկա	Հեռավար
Կազմակերպչական ոլորտի ակտիվությունը	70,6%	29,4%
Ինքնուրույն մտածողություն	76,5%	23,5%
Ընդհանուր ակտիվություն	76,4%	23,6%
Հաղթահարել կենտրոնացման դժվարությունները	73,5%	26,5%
Կախվածությունը ծնողից	32,4%	67,6%
Վստահություն սեփական ուժերին	69,6%	30,4%

Հեռավար կրթության պայմաններում երեխայի ակտիվության դրսևորումները մեծամասամբ կախված են լինում ծնողներից: Նրանք ինքնուրույնություն չեն դրսևորում ուսման ժամանակ: Երեխաները դժվարանում են դասերին կենտրոնանալուց, ընկել է ընդհանուր ակտիվությունը: Ինքնուրույն

մտածողությունը հեռավար կրթության պայմաններում նույնպես ցածր է: Բարձր ցուցանիշ է կազմում ծնողներից կախվածությունը: Կարող ենք նկատել, որ հեռավար կրթության պայմաններում երեխայի ինքնուրույնությունը ակտիվության տեսանկյունից ցածր մակարդակի վրա է գտնվում, տվյալներից երևում է, որ նրանք կախված են լինում այլ մարդկանցից, նրանց հաճախ վերահսկում են, որպեսզի չշեղվեն, ինչպես նաև երեխաները սկսել են կասկածել իրենց ունակությունների վրա:

Դիտարկենք առկա և հեռավար կրթության պայմաններում կրտսեր դպրոցականների ինքնուրույնության դրսևորման ցուցանիշները ուսուցիչներ տեսանկյունից:

Աղյուսակ 2.

Ինքնուրույնության դրսևորման ցուցանիշները առկա և հեռավար ուսուցման պայմաններում ուսուցիչների տեսանկյունից

	Առկա	Հեռավար	Երկու դեպքում էլ
Երեխաների ակտիվությունը	90,9%	9,1%	-
Ինքնուրույն մտածողությունը	72,8%	18,2%	9,1%
Ուսումնական խնդիրների հաղթահարելը	54,5%	9,1%	36,1%
Կենտրոնացման դժվարութ. հաղթահարում	72,7%	-	18,2%
Նպատակադրում	54,5%	-	45,5%
Տեսակետի արտահայտում	36,4%	-	45,5%
Աշխատանքի պլանավորում	45,5%	-	54,5%

Աղյուսակ 2-ից երևում է, որ առկա կրթության պայմաններում երեխաների ակտիվության դրսևորման ցուցանիշները կրկին բարձր են: Առկա ուսուցումը նպաստում է ճանաչողական գործընթացներում ինքնուրույնության դրսևորումներին՝ ինքնուրույն մտածողությանը, ուսումնական խնդիրների հաղթահարելուն, կենտրոնացման դժվարությունների հաղթահարմանը: Կարևորում ենք վերջին 2 տվյալները, համաձայն որոնց տեսակետների արտահայտումը և աշխատանքի պլանավորումը և՛ առկա, և՛ հեռավար կրթության պայմաններում ունեն բարձր դրսևորումները, այսինքն ուսման փոփոխությունը այդ 2 գործոնի վրա ազդեցություն չի ունեցել: Երեխաների նպատակադրումը ևս մեծ փոփոխություններ չի կրել հեռավար ուսուցման պայմաններում: Ինքնուրույն մտածողության ցուցանիշները վկայում են այն մասին, որ երեխաները առկա կրթության ժամանակ ինքնուրույնություն են դրսևորում, իսկ հեռավար կրթության պայմաններում նրանք ավելի կախված են շրջապատից և ավելի շատ են օգնություն խնդրում ծնողներից:

Դիտարկելով ստացված արդյունքները կարող ենք ենթադրել, որ հեռավար կրթությունը չի նպաստում երեխաների մոտ ինքնուրույնության ձևավորմանը: Ստացված տվյալները վկայում են այն մասին, որ առկա կրթության ժամանակ երեխաների ինքնուրույնության դրսևորումները արտահայտված են, և կրտսեր դպրոցականները կարողանում են դրսևորել իրենց ակտիվությունը տարբեր ոլորտներում:

Եզրակացություններ

Ինքնուրույնության կարևոր ցուցանիշներ են համարվում նպատակադրումը, ինքնակառավարումը, ճանաչողական գործընթացները: Այս տարիքում նրանք կարողանում են ինքնակազմակերպել իրենց վարքը, գործողությունները, պլանավորել առօրյա և կրթական գործունեությունը: Համաձայն ծնողների, կրտսեր դպրոցականները հեռավար կրթության պայմաններում ավելի կախված են շրջապատից, ինքնուրույնություն չեն դրսևորում և նախաձեռնողականությունն իրենց վրա չեն վերցնում: Երեխաները սկսել են կասկածել իրենց ունակությունների վրա, նրանց մոտ ընկել է ուսումնական հաջողությունը և ընդհանուր ակտիվությունը:

Համաձայն ուսուցիչների, կրտսեր դպրոցականները հեռավար կրթության պայմաններում կախված են լինում շրջապատից, ակտիվությունը ցածր մակարդակի վրա է: Ճանաչողական ոլորտում նույնպես ինքնուրույնություն չեն դրսևորում, ցածր է ինքնուրույն մտածողությունը, կենտրոնացվածությունը՝ նրանք անընդհատ շեղվում են դասապրոցեսից: Ուսուցիչները նույնպես կարծում են, որ ընկել է երեխայի ընդհանուր ակտիվությունը:

Առկա տվյալները համեմատելով կրթական չափորոշիչների հետ, որտեղ ընդգծված է այն փաստը, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները պետք է ունենան ինքնուրույն սովորելու կարողություններ՝ ինքնակազմակերպվել, ինքնուրույն գործունեություն ծավալել, վստահել սեփական ուժերին, ճիշտ գնահատել իր հնարավորությունները, կարող ենք նկատել, որ հեռավար կրթության պայմաններում այս որակներից մեծ մասը բացակայում է:

Գրականություն

1. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77183
2. **Абрамова Г. С.** А 16 Возрастная психология: Учеб. пособие для студ. Вузов., 4-е изд., стереотип. - М.: Издательский центр «Академия», 1999.-672 с. ISBN 5-7695-0303-3
3. **Баранов Е.Г.** Формирование самостоятельности личности.// Ежегодник Российского психологического общества: Материалы

3-го Всероссийского съезда психологов.25-28 июня 2003 года:Т.1. - СПб.: Изд-во С.-Петерб. ун-та,2003. - с. 289-293
4. **Корсини Р. А. Ауэрбаха**, Психологическая энциклопедия /Под ред – СПб., 2006, с. 424.
5. Психолого-педагогический словарь для учителей и руководителей общеобразовательных учреждений. - Р.н/Д.:Феникс, 1998. - 544с.
6. **Савельева Т.М.** Самостоятельность младшего школьника и показатели ее развития / Т.М. Савельева// Пачатковаенавучанне. – 2012, №6., с. 28–31.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հակոբյան Ս., Խանամիրյան Ի. Ռ. (Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան)

Սույն հոդվածում արտացոլված է 2020 թվականի համաճարակի արդյունքում հեռավար կրթության պայմաններում երեխայի ինքնուրույնության վերաբերյալ ուսուցիչների և ծնողների պատկերացումները: Համեմատություն է տարվում առկա և հեռավար կրթության ընթացքում ինքնուրույնության տարբեր ցուցանիշների և ոլորտների միջև (ակտիվություն, քննադատական և ճկուն մտածողություն, տնային աշխատանքների ինքնուրույն կատարում, ծնողներից կախվածություն տարբեր առաջադրանքներ կատարելիս և այլն): Ինքնուրույնության որակն առավելապես կարևորվում է կրտսեր դպրոցական տարիքում, երբ գերակայող է դառնում ուսումնական գործունեությունը: Այդ իսկ պատճառով հետազոտությունն ուղղված է կրտսեր դպրոցականների ինքնուրույնության առանձնահատկությունների ուսումնասիրմանը, ում համար հեռավար կրթության անցումն առավել մարտահրավերային էր, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Ըստ հետազոտության վարկածի՝ ենթադրվում է, որ ի տարբերություն առկա ուսուցմանը, հեռավար ուսուցումը նպաստում է կրտսեր դպրոցականի ինքնուրույնության զարգացմանը: Իրականացվել է փորձագիտական հարցում 2 հարցարանով:

Հետազոտության արդյունքները ներկայացված են համապատասխան եզրակացությունների տեսքով: Ընդհանուր առմամբ, հեռավար կրթությունը բացասական ազդեցություն ունի կրտսեր դպրոցականի ակտիվության, ինքնավստահության և ինքնուրույնության վրա:

Հանգուցային բառեր՝ *ինքնուրույնություն, ակտիվություն, ուսումնական գործընթաց, հեռավար կրթություն:*

ОСОБЕННОСТИ САМОСТОЯТЕЛЬНОСТИ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ В УСЛОВИЯХ ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ

Акопян С., Ханамирян И. (Ереванский государственный университет, Ереван, Армения)

В данной статье отражены представления учителей и родителей о самостоятельности младших школьников в условиях пандемии 2020 года. Дается сравнительный анализ между особенностями и видами самостоятельности (активность, критичность и гибкость мышления, самостоятельное выполнение домашнего задания, зависимость от родителей при выполнении различных заданий и др.) в условиях дистанционного и очного обучения. Самостоятельность особенно важна в младшем школьном возрасте, когда доминантой становится учебная деятельность. Исследование направлено на изучение особенностей самостоятельности младших школьников, для которых переход на дистанционное обучение стало особенно критичным, учитывая их возрастные особенности. Согласно гипотезе предполагается, что в отличие от очного образования дистанционное обучение способствует развитию самостоятельности младших школьников. Был проведен экспертный опрос по 2 анкетам.

Результаты исследования представлены в виде соответствующих выводов. В целом можно констатировать, дистанционное обучение негативно сказывается на активности, уверенности в себе и самостоятельности младших школьников.

Ключевые слова: *самостоятельность, деятельность, образовательный процесс, дистанционное обучение.*